

Ողջ գըտանէր զիւր սիրելիս,
Զորս չեւ յուսայր դիտել յաստիս :

2 Որոց պատմեալ զանցեալ չարիս
Վերառաքէր փառս գոհալիս
Այնմ՝ որ պահէ ըզվշտալիս
Ի մէջ վ՛տանգաց սոյն աշխարհիս :

3 Յետ դիւրելոյ զանձին կարիս
Առեալ ընդ իւր յիւրոց զօքանիս
Եւ յայգորել ի մէջ Ագգիս,
Զորս համարէր յայգորելիս :

4 Այլ նախ զՅակոբ մեծն ի ուրբիս
Որ սադրեալ էր զինքն ի ս՞նոտիս
Ողջունէր նա գեր քան զարգիս,
Ոչ եւս թըւեալ ընդ թըշնամիս :

5 Անդ էր դիտել զողոն եւ լալիս,
Զըղջումն եւ ցաւ երեւելիս,
Զոր փըղձուկ սիրտ Պատրիարգիս
Յաչս ամենից առնէր յայտնիս :

6 Եւ սոյն տեսիլ տեսարանիս
Տեսողս գործէր գորովալիս,
Զորոց եւ զաչս արտասուալիս
Եւ ըզխոկմունս զարմացմամբ լիս :

7 Զի անդ Յակոբ բազկատարած
Նախ քան գրկելն իւր արտալած
Յուցեալ թէ ինքն էր մեղսամած,
Քաւել հայցէր զանձին գործած :

8 Յայնժամ Սարգիս ներող գըթած
Մոռանալով զիւր շար արկած,
Թողեալ նըմա զերթ ողորմած,
Գըրկէր ըզնա համբուրամած :